# 47. ՓԱՐԻՔԹԵՐ ՈՒ ԹԱՔԱՎՈՐԻ ԼԱՃ

Ժամանակով կըլնի թաքավորըմ: Թաքյ ջահել զղե մը, քյե պես: Տղեն ի, օր վըր ավուր կճոճանա, ուր քյամիլ կառնի, կըլնի փաս-քսան փարեկան: Կէրթա ավ անելու ավուր մեկն, հ'եվարին նեճիրից կպըռծնի, կփառնա կգյա թեխ փուն: Կփիսնա նախրորթի ախչիկ փաշփեն պանջար քյաղելուց կուգյա փուն: Թաքավուրու լաճն ի, կուգյա կխասնի նախրուրթու ախչկան: Կիրիշկա նախրուրթու ախչկան իրես, ուր միփք շափ կավիրե վեր նախրուրթու ախչկան: Էն կանդար որ նախրուրթու ախչիկ խորոփ ի, փեսակ չունի:

Թաքավուրու լաճ կխարցնի ախչկան. - Ախչիկ, փյու վի՞ր ախչիկն իս:

- Շահ-Զադա, ի՞նչ փ'անես փյու, ինչի՞ կխարցնես:
- Իսկի, պա մը չէ:
- Ես նախրուրթու ախչիկն եմ:

Թաքավուրու լաճ կթոնի գյա փուն, ախչիկն էլ կէրթա ուր փուն:

Թաքավուրու լաճ չէրթա նեճիր անել, կնսփի ուր փուն: Կնսփի փուն, շափ կմփածի մեչ ուր հալին, կմալյուլի կմնա:

Ավուր ·մեկն մերն կէհա ուր լաճուց կխարցնի. - Տղա՛, քյե ի՞նչ ըլե, ըննա փյու մալյուլ-մըռութ նսփիր ես, էլ նա փյուս կըլնես, նա ավ անել կէhաս: Ասա՛, բալամ, ասա հենքյ քյո դարդն ի՞նչ ի:

Շափ կինի խեփ լաճուն:

Լաճ դողըրու կասի: Կասի. - Մարե՛, վալա փյուքյ նախրորթի ախչիկ պիփի պիրեքյ զի խամար, ըլնի՝ էն ի, չըլնի՝ էն ի:

- Տո բալա՛մ, - կասի, - մեր պափվին չկըպնա՞, քյո խեր թաքավոր մ'ըլնի, էրթա նախրուրթու փյոտ, նախրուրթու ախչիյն ուզի:

Կասի. - Չըմ կիփե, կէրթա կուզի՝ կուզի, թե չէ՝ ես ինոր լաճութեն չըմ անե:

Կնիկն ի, հ'էվարին թաքավորուն կասի. - Թաքավոր, - կասի, - քյո լաճ գյեռ ըռըսնա կասի: Կպիրես՝ պե, չպիրես, վոլա, էն էլ քյե լաճութեն չանե:

Թաքավորն ի, լաճուն կկանչի մռ զինքյ: Կասի. - Բալա՛մ, մա մեչ աշխըրին էլ թաքավորու ախչիկ չկա՞: Եմ նազըրներայ-վազիրներայ ախչկըռնիրայ աչք փիր՝ ես ուզեմ քյե խամար:

- Չէ, - կասի, - թաքավո՛ր, ըլնի՝ էն ի, չըլնի՝ էն ի:

Թաքավուրու չարեն կկտրի, կասի. - Բոշ ի, ֆայդա չանեմ, ախըր ես տ'էրթամ ուզեմ, ես լաճու խաթըր չըմ թռնե զիզնիյ մնա:

Թաքավոր ջույաբ կանի նախրուրթուն, նախրորթ կուգյա մռ թաքավոր:

- Նախրորթ, - կասի, - կիտե՞ս ես քյե ինչի՞ եմ կանչե:

Կասի. - Չէ, թաքավոր ապրած կենաս, ես ի՞նչ կիտեմ տյու զի ինչի՞ ես կանչե:

Կասի. - Նախրո՛րթ, ես քյե կանչիր եմ, որ տյու քյո ախչիկ տաս իմ լաճուն:

- Թաքավոր, - կասի, - իմ ախչիկ քյո լաճուն լայեղ չի, էտա խոսք խոսք չէր:

- Չէ,- կասի, - պիտի տաս:

- Թաքավո՛ր, - կասի, - կուտամ քյու տռան սեյիսին, քյու տռան շան իմ ախչիկ, ամա ոչ քյո լաճուն: Իմ ախչիկ քյու տղի ծեռ ջուռըմ չի կանա լցե: Ես մեկ ֆուքարա մարթըմ, տյու մեկ թաքավոր մ'ես, քյո պատիվին էլ չի կըպնե՞, որ քյո մարթեր զյան վեր մեր տռան:

- Մի հ'էրկըռնցուցի, - կասի, - կնա՛ քյո պատրաստութեն տեսի, ես կուգյամ քյո ախչիկ կտանեմ իմ լաճուն:

Էլավ նախրորթ կնա՜ց տուն: Կարմիր խնձոր չմտնե պերան, ըսկուն որ ուրախցե, էլե թաքավորուն խնամի:

Ախչիկն էր, հ'էվարին պա՜նջըրից էկավ: Կտիսնա որ խերն էսօր ուրախ ի: Ասաց. - Բա՜րո, ասփված խերն անի, էսօր ինչի՞ ըսնա՜ ուրախ ես:

Ասաց. - Բալա՛մ, էսօր թաքավոր կանչեր էր մռ զինքյ:

- Է՞, խերն ըլնի, տյու դի՞ր, թաքավորն դո՞ր, ընչի՞ էր կանչե:

- Բալա՛մ, զի կանչեց, ասաց՝ իլլա՜հ տյու քյո ախչիկ տը տաս իմ լաճուն:

- Ա՞խ, - ասաց, - ասփված էն թաքավուրու տուն էլ ավիրի, քյոն էլ խեփ:

Ախչիկ ուր փա՜չեն վեր իտու էնոր թեռմբնի փա՜չեն շանց իտուր խոր, ասաց. - Տյու ի՞նչխ չըս ամչըռնա, թեռմբանմ՝ արեր ես զիկ առանց ծաքյ, տյու կարըմ կտնես իմ հ'առա՜ճ, ես մախթով կար կանեմ: Ես թաքավուրու լաճուն ի՞նչխ խոսք խասկըցուցեմ: Վալա, ես չըմ առնե: Թե թաքավուրու լաճ էն մեկ գործի խամարն ի կառնի, թո էրթա՜ մեչ նախրին, իշվանթեր կուլանմիշ անի:

Խորն առակեց, զա չի թող, որ խոր չասայ:
Նախրորթն էր, առափուն էլավ կնայ մն թաքավոր էմ էլ:
Ասայ. - Թաքավոր ապրած կենաս, իմ ախչիկ խոսք չի փա:
- Ընչի՞:
- Ապա իմ ախչիկ կասի. «Ես ֆուքարա եմ, չեմ կանա ինոր ջյուռըմ քյաշե, ես վարժափուն չեմ կնայե, բռնդած վերի ոչխըրներայ պես ես սար-քյարն եմ կան իկե, պանջար եմ քյաղե: Թե որ կուզի ես էնոր լաճն առնեմ, էմ էլ առփմե առփուն էրթամ պանջըրե, հ'էվարին գյամ, էն իմ քյարն ի»:
- Չեմ կիփե պանջար կքյաղի, խաթունութեն կանի, ինչ կանի թող անի: Յան կառնի, յան էնոր վիզ պիփի զանեմ:
Նախրորթ իթող, փեոր-փեռշման էկավ փուն, կնայ ախչկան ասայ.
- Ախչիկ, ասփված քյո փուն ավեր չանի, գյեո ըղընձ կափ:
- Է՞յ, բարո՛, կուփաս փու, ան սոնյու ախըր փյու փը փեռշըմվիս, էլ ես չըմ կանա պամ՝ անե: Քյու պափրասփութեն փիս, շափեն-քըչկեն, ախըր մարթերայ մոփեն մե գյեոռա չամչընանքյ:
Նախրորթն էր, էն որ թաղարուքյ փեսավ, թաքավորն էլավ կնայ ուզեց: Թաքավորն էր, առեց ախչիկն իպե, փսակեց վեր էնոր լաճուն, էնոնց քյեֆ-ուրախութեն արիցին յոթն օր, յոթ կիշեր:
Մե ժամանակըմ ըսկուն իրիկ-կնիկ սեր-բարյուշ մնացին: Նախրորթն ասայ. - Ես էրթամ իմ ախչիկ պիրեմ քյանիմ'օր խուր:
Էլավ կնայ, հրաման առեց թաքավուրուց, էլավ կնայ ախչկան ասայ. - Ախչիկ, իկիր եմ քյո իփե, որ քյե փանեմ խուր:
Ասայ. - Բարո՛, կվնասվես. ի՞նչ փ'անես, փյու խեղճ-ֆուքարա մարթ մ'ես, խե քյո հալին:
Թայբիր չէլավ: Էլավ առեց կնայ ուր ախչիկ: Ախչիկ առեց կնայ փուն, քյանի մ'օր ախչիկ մնայ ուր խոր փուն, ասայ. - Ախչիկ, էլի պափրասփութեն փիսի, ես իմ փեսեն փը կանչեմ փուն:
Ասայ. - Բարո՛, վազն արե, վնաս կքյաշես, մը պիրե, զի պիրիցիր, էնոր մի պիրե:
- Չէ, - ասայ, - իլահ, պիփի ես էրթամ պիրեմ: ·
- Էհ, քյո մուր քյո ճակափ, կէրթաս կնա՛:
Նախրորթ էլավ կնայ մն թաքավոր էմ էլ: Ասայ. - Թաքավո՛ր, հրաման փուր, քյու փղեն քյանի մ'օր փանեմ էրթամ իմ փուն:
Ասայ. - Կնա քյու փեսին ասա՛, թե որ կզյա՝ փար կնա:
Կնայ փեսին ասայ, փեսին առեց, առեց փարավ էնոր փուն: Թաքավուրուց չորս օր օր ի ուզի, չորս օրից պիփի էրթա ուր փուն:
Գյացին փուն: Ավուր մեկ լաճն էլավ փյուս ֆռալու: Ֆռաց կնայ փուն, որ էնոր թաղարյուք փիսներ, էրթեր ուր փուն: Կայ պարով ուզեց անիրոչ մոփեն, հ'էլավ փյուս: Հ'էլավ որ պիփի էրթեր ուր փուն, էրկու խափ փարի վիրվանց խարաֆ քյամու պես զարկին, վերուցին փարան: Տարան էնոնքյ փրիցին մեչ ուրենց երկրի խաս բախչին, մե հափ

մտուցին ուրենց անմահութնի հ’ավուզի մեջ, լոխկըցուցին, խանիցին տյուս, էնոնց քյեֆ-ուրախութեն խետ էնոր արիցին: Տրիցին մեջ սնդկին, տրիցին հ’ավուզի վերեն ծածըմ կեր՝ էնոր վերեն: Ուրենք կէրթեն հ’յուրիշ երկրներ սեյրան անելու, ֆռալու:

Էնոնքյ մնացին մեջ ուրենց հալին, մենքյ գյանքյ թեխ թաքավորն ու նախրորթ:

* * *

Տղի չորս օր էլավ տըսնըչորս օր, տղեն նա կէրնա, նա պան:

Թաքավորն ասաց. - Ջանըմ, էսա տղեն ինչի՞ չէկավ: Խեղճ-կրակ մնացեր ի էն շիվըրի տուն, կնացեքյ ասեքյ, թո գյա:

Կնացին նախրուրթին ասիցին. - Թաքավոր կասի. իմ լաճ էօրեխկեքյ թո գյա:

- Ջանըմ, - ասին, - ծեր լաճ մենքյ էօրեոխկիր ենքյ. է՜, էլավ տաստըսվերկու օր ի, ինչ էն իկե:

Էլան կնացին թաքավուրուն ասին: Թաքավորն ոտ կնգյան խառցուց. - Մեր տղեն իկե՞րի տուն:

- Չէ՛, չիկե:

Էսա տեղ խարցնեն, էնա տեղ խարցնեն, մարթ չկա, մարթ սալախ չի տա:

Խաբար ճամխիցին նախրուրթուն: Նախրորթ հ’էլավ էկավ մո թաքավոր: Թաքավորն ասաց. - Հ’ու՞ր է իմ լաճ:

- Թաքավոր, - ասաց, - ես էօրեոխկիր եմ՝ իկե քյո լաճ, զաթի ոտ մոտեն աջալա թողեց էկավ:

- Նախրո՛րթ, - ասաց, - եմ լաճ չիկե, եմ լաճ քյեզնից կուզեմ: Յան եմ լաճ կկընդնես, յան քյու վիզ կկտրեմ:

Նախրորթն էր էլավ կնաց տուն:

Ախչիկն ասաց. - Բա՛բո, թաքավոր քյե ինչի՞ էր կանչե:

- Ախչի՛կ, հալ-հեքաթ կասեր. «Եմ լաճ կուրիսեր ի, չիկե տուն, իմ լաճ կկընդնես կպիրես: Պե, թե չէ՝ քյո վիզ կկըտրեմ:

- Ի՞նչխ ի, բաբո, եմ խաբար արփարայա՞ն:

Որտեղ կան էկան, որ տեղից խառցուցին, մարթ սալախ չիտու, տղեն կուրիսավ կնաց: Մեջ էտա նեղութնին ասպվածութեն լաճ տղեմ՝ իտոտ թաքավոտու լաճուն:

Թաքավոր նախրուրթուն ասաց. - Նախրո՛րթ, ջուաբըմ առի՞ր եմ լաճուց:

- Չէ, - ասաց, - իսկի սալախ չեմ առե:

- Չեմ կիտե, նախրո՛րթ, էլ թայբիր չէլնե, յան իմ լաճ կկընդնես, յան քյո վիզ կկտրեմ, քյո յոթ տալեն խետ կկըտըրցուցեմ:

Էլավ կնաց մո ախչկան, ասաց. - Ախչիկ, բոշ ի, մեր գյլոխ տ’ուտի թաքավոր:

Ասաց. - Բա՛բո, տե կնա մո թաքավոր, մե խա ծիմ՝ ուզի

թաքավուրուց: Որ կասի. «Ընչի՞ խամար»: Ասա. «Իմ ախչիկ փը՛խեծնի, էրթա ուր իրկան իփև կան գյա»:

Նախրորթ կնայ մո թաքավոր, ծին ուզեց, առից էկավ:

Ախչիկն էր, էլավ ծին խեծավ, ասաց. - Բաբո՛, ես գյեռ կքշեմ, կէրթամ իմ իրկան իփև: Որ թաքավոր կասի. «Ես քյո վիզ պիփի կփրեմ, իլահ ես եմ լաճ քյեզնից կուզեմ», - փյու էլ ասա. «Ապա ես եմ փղեն վի՞ր մոփեն ուզեմ: Տղե մը քյեկ ի կուրիսի, մեյ զի յի կուրիսե, փյու ինչի՞ իմ վիզ կզանես»: Նիզամով փյու թաքավորուն կպըռնըցուցե՛ս:

Կայ պարհ̌վ արայ հազըրնեկայ ախչիկ, փղեն գյրկեց, ծին քշեց: Էն քշեց կնայ մեչ երկրնիկայ, կան էկավ:

Մենքյ գյանքյ թեխ թաքավոր, թեխ նախրորթ էմ էլ:

Թաքավորն էր, էմ էլ նախրուրթու յախեն պռնեց. - Հաիան, ես եմ լաճ քյո մոփեն կուզեմ: Թե չէ՝ քյո գյլոխ զանել փը փամ:

Նախրորթ էլավ կնայ մեչ մաջլիսին, ասաց. - Քյու փղի սալախ չառիցի քյո փղեն կնայ կուրիսավ. փյու կասես՝ ես քյու վիզ փը կըփրեմ, ե՞ս վիր վիզ փը կըփրեմ:

Թաքավորն ասաց. - Ինչի՞, նախրո՛րթ:

Ասաց. - Քյո փղեն կուրիսե, իմ փղեն էլ խե քյո փղին կուրիսե: Էլ ապա փյու ինչի՞ եմ վիզ կզանես: Թե որ եմ փղեն էկավ առանց քյո փղին, էն կախ իմ վիզ զարկ: Թե որ ասփված հ'աճոխցուց էրկուսն էլ էկան, փյու քյու փեղ անոշ, ես իմ փեղ:

Մաջլիսն ասաց. - Աջաղի բիլա թաքավո՛ր, նախրուրթու խոսքն ի, որ մափն էլ կփրես՝ արուն կուգյա. քյոն լաճ ի, էնոր՝ ախչիկ, փարբեր չկա, ջիգյար մեկ ի:

Նախրուրթուն իգին փվին, էկավ նսփավ ուր փուն, էմ էլ ուր նախիր քշեց:

Մենքյ էրթանքյ թեխ խեղճ նախրուրթու ախչիկ: Ախչիկն էր, կնայ ինգյավ մեչ սարերայ, քյարերայ, կիշերն արայ ցերեկ, ցերեկն արայ կիշեր:

Ավուր մեկն կիշեր ճամբախ կքյելեր կէրթեր, փեսավ որ մե հափ բազըրգըյնի մալ-փավըրի ծեն կուգյեր: Իրիշկայ որ բազըրգյնի ծիանքյ էկան խասեխաս էլան ինոր:

Ախչիկն ասաց. «Ես զի ճամխից փամ եփ, էսոքյ թո գյան ընցնեն, զի չփիսնան»: Ախչիկն էր, ուր ծին քշեց ճամխից փյուս, մեչ արփկերայ: Իրիշկայ գյիփին էրկու խափ կարմիր խավի ծու կեր, լոս կուփեր աթրաֆ: Ծիուց իճավ փակ, առեց իփիր ջեռք, էմ էլ խեծավ ծին, քշեց կնայ, կնայ բազըրգյընին ընցավ:

Բազըրգյան իրիշկայ որ սիվութենըմ կեր ճամխից փյուս, արփկերայ մեչ: Բազըրգյան ուր մարթերայ ասաց. Կնայեքյ, էփա ի՞նչ սիվութեն ի, մեչ էսա արփկերայ կէրևա, չըլնի՞ մեր փավըրներն ին, թախկված են կնայած են էն թեխրանքյ:

Մարթերն են, քշեցին դեխ սիվութեն: Ախչիկն որ փեսավ, ծին քշեց:

Թռռային բազըրգյընի մարթեր վեր ախչկան, ասին. - Կայնի՛, թե չէ քյե կզարկենքյ:

Ախչիկ հ'ախու կայնավ: Կնային մո կնիկ, իրիշկային որ էսա կնիկ մ'էր, որ չուտես, չխմես, թամաշա անես:

Ասայ. - Հե՜յ կնի՜կ, փյու թաքյ կնիկ, առիր ես էսա փղեն դո՞ր կէրթաս էսա ճամխըներով:

Ասայ. - Իսկի, կարիք կնիկ եմ, մեռըրիր եմ մեչ էսա ճամխըներայ, չեմ կիտե դոր կէրթամ:

Մարթերն էկան բազըրգյընին ասիյին. - Էսասնա անտեր-անտիրական կնիկմ'ի, փղեն էլ զյիրկն ի, որ չուտես չխմես, թամաշա անես:

Ասայ. - Կնայեքյ էտա կնգյան ասեքյ, թո գյա:

Էլան կնային կնգյան ասին. - Մեր բազըրգյան քյե կկանչի, արե տես ի՞նչ կասի:

Կնիկն էր, ծին կոռեց, էկավ մո բազըրգյան:

Բազըրգյան խարցնեց կնգյան մոտից. - Ո՞ր տեղեն կուգյաս, դո՞ր կէրթաս, վի՞ր ախչիկն ես:

Խարցնելուն ւպես կնիկ ուր խոր-մոր սալախ չի տուր, ասայ. - Չեմ կիտե, վեր զի մութն ի, ես եմ, էսա մեկ փղեն:

Բազըրգյան ուր մարթերայ ասայ. - Դե փյու ծեր ծիանքյ քշեքյ, ես էսա կնիկ տանեմ մեր տուն, տառնամ գյամ:

Տավըրներ ինոնքյ քշին կնային: Բազըրգյան առեց կնիկ, կնայ էնոնց տուն: Բազըրգյան էնոր կնգյան ասայ. - Կնի՛կ, կտիսնա՞ս էսա կնիկ:

Ասայ. - Խա՛:

Ասայ. - Զիկ քյեզնի ամանաթ ասփված, քյու խալավն ինչ քյեշիթ ի, ծեռքյ մ'էլ ըսկուն խալավ կկտրես էսա կնկյան խամար: Էսա լաճն էլ կթալես քյու փոխփըթից կուգյա տակ, կանես քյու խալավ տղեն, քյու խուզյու տղի պես շախես: Ինչ կերակուլ որ փյու կուտես, էսա կնկյան ու ուր տղին ըսկուն կիրիյուցես, որ իսան չկիտնա, էսա անտեր կնիկ ի: Ես զյեռ կէհամ կխասնեմ իմ տավարնեկայ: Տե մնայի պարով, զիզնից քյե ամանաթ, քյանի ես չեմ իկե, փյու էսօր իզին չտաս:

Էլավ բազըրգյան իթոդ կնայ խասավ էնոր տավարնեկայ:

Էտա բազըրգյընի կնիկն էր, ուր քյեշիթ ծեռքյըմ խալավ կտրեց էտա կնկյան, լաճն էլ արաց ուր տղա, ուր խուզյու պես կուզի, կշախի կպախի:

Ժամանակըմ ըսկուն մեկտեղ կերան, խըման, քյեֆ-ուրախութեն արին: Լաճ ճոճացավ, էլավ տաս-տըսնըխինգյ տարեկան:

Ավուր մեկ զատիկ էր, զյեռ տղեյներ խավուծու կխաղան, ուրախութեն կանեն: Լաճ մըռութ էկավ մտավ տուն:

Մերն ասայ. - Տղա, ինչի՞ ես մռթե:

Ասայ. - Մարե, խըլղի տղեներ խավուծու կխաղան, զի խավուծու չկա, որ ես էլ խավուծու խաղամ:

Մոր փիժարն էկավ վեր լաճուն: Էլավ փաշփի միչու կարմիր, խորոփ խավուծուներայ իփուր փղին, ասայ. - Դե փղա՛, փյու էլ կնա խաղա՛, փյու քյու խավուծուն քյու ծեռնեն չխանես, մարթու փաս:

Ասայ. - Չէ, մարե, ես իմ խավուծուն մարթու չըմ իփա:

Առեյ կնայ լաճ, գյեռ խավուծու կխաղա. որ խավուծվի վերեն կզանի, կկոփրի:

Վազիրի մեկն էկավ էն փեղեն ընյավ, աչքն ինգյավ էփա խավուծուն: Իրիշկայ, որ էսա լաճու ծեռ խավուծու մը կա, ամա խավուծու չի: Լաճու ծեռնեն խավուծուն իզարկ, փարավ կնայ:

Լաճն լալելեն էկավ պուն:

Սերն ասայ. - Տղա՛, որփի՛, քյե ի՞նչ էլե:

- Մարե՛, - ասայ, - վազիր էկավ իմ ծեռնեն խավուծուն խլեյ, առեյ կնայ:

- Բալա՛մ, - ասայ, - ինչի՞ կուլաս, փարավ, թո փանի:

Վազիրն էր, էփա խավուծուն փարավ իփուր թաքավուրուն:

Թաքավորն առեյ, իրիշկայ վեր էփա խավուծվին, խելքյ կնայ, ասայ. - Վա՜յ վազիր, ըսնա պան էլ կա մեչ աշխըրքյին մանգյար: Վազիր, էսա փյու ո՞ր փեղեն պիրիյիր:

- Թաքավո՛ր, - ասայ, - վալա՛, փղեյներ խավուծու կխաղեն, էսա խավուծուն փղի մը ծեռն էր, իմ աչք ինգյավ ինե, ես խլիր եմ, պիրիր եմ:

- Է՜, փյու չճանչըյա՞ր, փղեն վիր լաճն էր, վիր փնեն էր:

- Չէ, չճանչըյա:

Թաքավորն ասայ. - Վազիր, քյեզնե կուզեմ, որ էրթաս էն լաճ խասկընաս, վի՞ր փնեն ի, վի՞ր փնեն չի:

Վա̈զիր էլա̈վ կնա̈յ էն փեղ, ինչ խավուծու կխաղան: Լաճերու մոփեն խսրյնեյ. - Տղա՛, էն փղեն որ ես էն խավուծուն էնոր ծեռնեն առի փարա, էն վի՞ր լաճն ի:

Ասիյին. - Բա̈զըրգյընի լաճն էր:

Վազիր իթող կնա̈յ թաքավուրու մոփ, ասայ. - Թաքավոր ապրած կենա, էն փղեն բազըրգյընի լաճն էր:

Կնիկն էլա̈վ ասայ. - Բոշ ի, ես էրթամ թեխ եմ լաճու խավուծուն ուզեմ պիրեմ:

Բա̈զըրգյընի կնիկն էր, էլա̈վ կնա̈յ դողրու մո թաքավոր, ասայ. - Թաքավոր ապրած կենաս, ես էսօր իկիր եմ մո քյե գյանգյափ:

Ասայ. - Քյո գյանգյափ ի՞նչ ի:

- Իմ գյանգյափ էն ի, որ ես իմ փղեն խաներ ի փյուս, խավուծուն փվեր է լաճու ծեռ, խե փղեներայ կխաղեր: Քյո վա̈զիր ռասփ իկեր է, իմ փղի ծեռնեն խլեր ի, պիրեր ի:

Վա̈զիր կկանչի դա̈, կասի. - Տյու ի՞նչ խավուծու ես պիրե:

- Թաքավոր, - կասի, - ի՞նչ խավուծու, էն փարին որ ծ'ուր ի կփրեյին փարան, էն խավուծուն մեչ քյո խա̈զինին էր, կփրիյին փարան, էն խավուծուն էլ խե քյո խազինին փարած են:

Էլաﬓ պիրիցիﬓ: Թաքավորﬓ ասաց. - Բազըրգյըﬓի կﬓիկ, էստ յի՞ քյո խավուծուﬓ:

Ասաց. - Խա՛:

Թաքավորﬓ ասաց. - Էստ խավուծուﬓ փարող եմ խազիﬓեﬓ էլ կտրե փարեր ի, ես քյեզﬓից կուզեմ իմ խազիﬓի գյող: Յաﬓ էստ գյող կպիրեքյ, յաﬓ ծե սրե կըﬓցուցեմ: Կﬓա՛ էﬓ լաճուﬓ ասա թող գյա, էստ խավուծուﬓ որ ծեռﬓ էր:

Էլավ բազըրգյըﬓի կﬓիկﬓ էր, փեռր-փեռշմաﬓ թողեց կﬓաց:

Թաքավորﬓ ասաց. - Վազի՛ր, իﬓզյի իտրե, հեմ չէլﬓի էրթա փախի:

Կﬓացիﬓ: Վազիրﬓ էր կայﬓավ վեր պռաﬓ: Կﬓիկﬓ մտավ մեչ պաﬓ:

Բազըրգյըﬓի կﬓիկ թաքավորու լաճու կﬓգյաﬓ ասաց. - Աստված քյո տուﬓ ավեր չաﬓեր, էﬓ խավուծուﬓ որ պյու պվեր էր քյո լաճուﬓ ծեռ, որ կﬓացեր էր խաղցեր էր խե պղեյﬓեկյաց, էﬓ խավուծուﬓ մաﬓգյար թաքավուրու խազիﬓի խավուծուﬓ էր էլե: Էﬓոր խամար վազիր պղի մոտեﬓ խլիր էր, առիր էր փարեր էր, թաքավորուﬓ ﬓշաﬓց էր պվե: Թաքավոր զի կաﬓչեց, ասաց. «Էստ խավուծուﬓ իմ խապիﬓի խավուծուﬓ ի, քյեզﬓից կուզեմ էﬓ գյող, յաﬓ կպիրեքյ, յաﬓ ծե խողով-ճրով կըﬓցուցեմ»:

Էﬓտեղ կﬓիկ-պղեﬓ շատ կտրտմեﬓ:

Թաքավորու խարս կըլﬓի ուր լաճ կառﬓի, կէրթա մո թաքավոր:

Թաքավորﬓ ասաց. - Տյու՞ ես էստ խավուծուﬓ կըﬓդե:

Լաճﬓ ասաց. - Այո՛, ես եմ կըﬓդե:

- Է՜, - ասաց, - ես իմ խազիﬓեﬓ էլ քյեզﬓից կուզեմ: Յաﬓ իմ խազիﬓեﬓ, յաﬓ քյո վիզ կուտամ հ'առճև ջալադﬓերաց թրիﬓ:

Լաճու մերﬓ ասաց. - Թաքավո՛ր, քյո մաջլիս կէլﬓի:

Թաքավոր ուր մաջլիս կէռլըﬓցուց, դիվաﬓխաﬓեﬓ իլիﬓվաﬓ, էﬓոր օﬓիքյիլար, ﬓազիր-վազիրﬓեր բիթյուﬓ էկաﬓ ﬓստաﬓ:

Կﬓիկﬓ ասաց. - Թաքավո՛ր, էﬓ ժամաﬓակ իﬓչ քյո խազիﬓեﬓ կտրիﬓ փարաﬓ, մեﬓակ էստ մեկ խավուծու՞ﬓ էր մեչ քյո խազիﬓիﬓ:

Ասաց. - Խա՛, մեﬓակ էստ խավուծուﬓ էր մեչ իմ խազիﬓիﬓ, էստ խավուծու պես էլ հ'յուրուշ չկա, էﬓ մեկﬓ էր, հ'յուրուշ երկրից զի հադյա եէ էկած: Է՜յ, ﬓազիր-վազիր, պյու լսա՞քյ, խասկըցա՞քյ:

- Խա՛, մեﬓք լսաﬓքյ:

- Է՛, պյուք շահադ եքյ, որ թաքավուրու խազիﬓի մեչ էստ մեկ խավուծուﬓ էր:

- Խա՛, մեﬓքյ աստծու առաճ շահադ եﬓք:

Թաքավոր ասաց. - Էստ էﬓ մեկﬓ էր:

Էﬓ կախ որ թաքրիր պեﬓեﬓթերաց առեց, ասաց. - Որ մեկ խատ էլ էﬓ խավուծվուց պիրեմ, էստ խավուծուﬓ խասﬓի՞ զիկ:

- Խա, համս կտաﬓքյ քյե:

Էﬓ կախ ﬓոր ջեռբից խավուծուﬓ խաﬓեց, թալեց թաքավուրու հ'առաճ, ասաց. - Առա, էﬓ խավուծվու պես մեյ խատ էլ խավուծու, ես քյո գյողﬓ չեմ, մու իֆթիրա մ'աﬓե վեր զի, եմ խավուծու զավթե:

Էն կա՛խ նազիր-վազիրներայ, թաքավուրու պերանեերը մնայ պայ, ասին. էյ վա՜խ, էսա օռոսպին մե արայ ամոթով:
Էն կախ կարճր տվիցին, խավուծուն թաքավուրուց առին, տվին կնգյան, կնիկ կնայ:
Կնիկն էր, առեց ուր լաճ, էմ էլ կնացին բազըրգյընի տուն:
Թաքավոր չատ կմտածի, մառախ կանի, տամլայի կգյա: Էլավ ասայ. - Պիրեմ էն տղին, պիրեմ եմ ախչիկ փսակեմ վերեն, բալքիմ խավծըվեր էնոր ծեռնեն առնեմ:
Էլավ էօրեոխկեց լաճու իտև: Կնացին ասին. - Տղա՛, արե, քյե թաքավոր կկանչի:
Լաճն էր, էլավ առեց ուր մեր, կնայ թաքավուրու մոտ:
- Թաքավոր, մե ինչի՞ ես էմ էլ կանչե:
Ասայ. - Տղա՛, իմ սիրտ քյե չատ ի պռնե, քյե չատ սիրեցի, քյե պիտի անեմ զի փեսա:
Կնիկն ասայ. - Թաքավոր ապրած կենաս, չյում մեր մըրազ չկատարվի, ես եմ լաճ չեմ փսակե:
Ինչխ որ կանեն, կնիկ խոսք չի տա, ուր լաճ չփսակե:
Կասի. - Ծեր մըրազն ի՞նչ ի, տյուքյ պիտի ասեքյ:
Կասի. - Թաքավո՛ր, մեր դարդն էն ի, որ իմ իրիկ կուրիսեր ի, չյուր իմ իրիկ չկընդնեմ, ես եմ լչոր քյաղաքյ չէրթամ ու ասպվորի վերեն ումր չանեմ: Պիտի էրթամ ֆռամ, եմ իրիկ կընդընեմ:
Ծեռ քյաշեց թաքավոր էնոնց մոտեն, ասայ. «Չէլա՛վ, թայբիր չընի խե ըսոնց, թո թոնեն էրթան»:
Լաճ ինան մերն էր, թաքավորի սարից էճ ան տակ, կնացին էմել բազըրգյանի տուն:
Տղեն ասայ. - Մարե, տյու ընչի՞ թաքավորուն խափիցիր, մա բազըրգյան եմ խեր չի՞:
- Չէ, որդի, բազըրգյան քյո խեր չի:
- Մարե, - ասայ, - ապա իմ խեր վո՞վ ի:
Ասայ. - Քյո խերն էլ թաքավուրու լաճ էր, ֆլան ժամանակով էրկու փարի զարկին տարան: Չյուր մինչե մկա ել ես կփտռտեմ քյո խեր, սալախըմ չեմ առե:
Լաճն էր, ասայ. - Մարե՛, որ ըսկուն ի, մնացիր պարի. Չյուր ես իմ խեր չկընդնեմ, քյու մերութեն զի խարամ ի կայե: Ես էլ չեմ մնա քյո մոտ:
Էլավ կայ պարև արայ, մեր իթող բազըրգյընի տուն, ծին խեծավ, իթող կնայ:
Լաճն էր, ինգյավ երկրներ կան գյալ խոր իտև: Կնայ ինգյավ վեր մե խա ճամխին, քիչըմ կնայ տեսավ որ ճամբախն էլավ իրեքյ: Էնտեղ զոռբա կոճըմ կեր:
- Հե՜յ, - ասայ, - յարաբի ո՞ր ճամբախ էրթամ պարի տ՛էլնի զիկ:
Ասրծու խըրամանքյով էտա կոճից ծեն էլա՛վ. - Ջահել տղա՛, - ասայ, - ինչի՞ կմտածես:

Լաճն իրիշկայ էփա փեղրանքյ մարթ չկա, ծեն կէլնի:

Կոճն ասայ. - Հեյ ջահել փղա՛, քյո դա̈րդն ի՞նչ ի, ասա ես կկափարեմ:

Ասայ. - Քյո փուն ավիրի, փյու նոճ մ'ես խե քյո հա̈լին: Տյու ի՞նչխ իմ դարդին դարման փ'անես:

Ասայ. - Ջահել փղա, ասա՛, ասա՛:

Ասայ փղեն. - Վալա, ես իմ խոր իփև ման կգյամ:

- Թի՜յ, - ասայ, - հեյ բալա՛մ, քյո խոր սալախ ես կուփամ: Ամա իմ խելքյ չկփրե՝ փյուս պիրես: Վա̈խենամ փյու էլ էրթա̈ս մնաս էնփեղ, չգյաս, քյո ջահելութեն ափսոս ի: Ջահել փղա՛, որ փյու իկիր ես, ախըր փյու փ'էրթա̈ս: Էդա յաճրի պա̈րա̈կ ճամբա̈խ կպռնես, կէրթաս փարիիթերայ երկիր: Էնփեղ փարիիթեր կապրեն, էնփեղ էրթա̈յող եփ չփառնա, փարիիթեր սեհրիբազ են, մարթ կկուրսյուցեն: Կէրթա̈ս վեր քյո բա̈խչին խաս բախչե մը կա՝ էփ բա̈խչին նա̈ ոռ կա, նա գյլոխ: Մե հա կէրթաս էփա բախչեն կֆռաս, մե հա աննահութնի հ'ավուզ կա, մարմար քյարեր էն հ'ավուզի կող պիլոր: Կիրիշկաս որ վեր հ'ավուզին պա̈նցըր չինարի ծառըմ կա, էն ծառի վերեն սնդուկըմ կա, քյո խեր գյեռ դրուկ ի մեչ էն սնդկին: Կիփե՞ս ինչխ անես՝ որ քյո խեր պիրես, ջահել ես, ես կխղճամ քյե: Մե հա կէրթա̈ս մեչ հ'ավուզին քյո ծեռ վ' իրես խորոփ կլվաս, կլվա̈յվես, կսերսըփվես, քյո խայ կուփես, էն հ'ավուզի ճրիյ կխմես, կուգյաս էն հ'ավուզի պերան փոսըմ կփորես, կմփնես ինե: Քիչըմ կըռղ-կավալ կլցնես վեր քյե, որ էն փա̈րիքյ քյե չփիսնան: Ուրպաթ օր էն փա̈րիքյ կգյան, քյո խոր սնդուկ կառնեն կդնեն գյեփին, քյո խեր էն սնդիկիյ կխանեն փյուս, քյո խոր կասեն. «Դե արե էսա փեղ լոխկըյի, քյու խայ կե, մենքյ կէրթա̈նքյ քիչըմ կֆռանքյ, կգյանքյ»: Էնոնքյ որ կէրթան էն փեխ, փյու քյե խան քյո խոր իրես, քյո փոսից էլի փյուս, քյո խոր ճանչըյի, խա̈բա̈ր փու խեփ թե. «Իկեր եմ քյե կփանեմ»: Էնփեղեն փի մ'էլ մըփի մեչ փոսին, կըռղ-կավալ էմ էլ լիյ վիր քյե: Էնոնքյ փի գյան, քյո խեր էմ էլ փնեն մեչ սընդկին, փը փնեն վեր էն ծառին: Էնոնքյ որ գյան, ինոնց խալըվներ փը խանեն, փնեն վեր մարմար քյարերայ, փը լոխկընան, քյո խոր հ'առած էնոնքյ չեն լոխկընա: Որ էնոնքյ կմփնեն մեչ հ'ավուզին, փյու յավշըմ էնոնց շապկըներ գյողյի, կրակ թող ինե: Թե որ կառյար ըսկուն անե, կանաս քյո խեր պիրե, թե որ չէ, վոլա, փյու էլ կէրթա̈ս, քյո խերն էլ խեփ: Բալա՛մ, զի քյե ամանաթ: Ասփված, մեկ ողզե մը քյիզնե կանեմ: Մեկ շուշա ճյուր, մեկ խափ խնձոր կպիրես զի խամար քյո փե չինի: Մայան գյաս մո զիկ, պարով-ուրախութնով նոր ընցնեք էրթաքյ: Դե կնա, բալամ, ասփված խե քյե, ինչխ ասիյի, ըսկուն անես:

Լաճն էր, կայ պարով արայ կոճին, ինգյավ էն նեղ ճամխով, կնայ: Կնայ, շափ թե քիչ, ասփված կիփի, կնայ խասավ մեչ էն փրախփի հ'իգյու մեչ: Կնայ կոճի ասածին պես հ'ավուզ կընդավ, մարմար քյար էն կող պիլոր: Թամաշա արայ, իրիշկայ վեր ծառին, կոճի ասածին

պես պեսավ սնդուկըմ, ասաց. «Վոլա, էսա իմ խերն ի»: Էլավ նստավ մարմար քյարերայ վերեն, ուր ծեռ վ իրես լվայ, ինգյավ մեչ հ'իգյուն կան էկավ, նաֆաս պացվավ:

Լաճն էր, ասայ. «Էրթամ շոտըմ փոս փորեմ, չըլնի շոտ գյան նազյասթան»:

Էլավ էկավ խորոտ փոսըմ փորեց, քիչըմ կըռռ-կավալ ժողվեց, մտավ մեչ փոսին, կըռռ-կավալ իլից վեր փոսի պենին, որ չտիսնեն էնոր:

Ուրպաթ օրն էր, էրկու փարիքյ կըժալեն էճան վեր մարմար քյարերայ:

Պստիկ քյորն ասայ. - Ախչիկ, էսօր իսա ճրից խողածինի խոտ կուզյա:

Ասայ. - Ումուտախոր, քյո միտք էմ էլ չորայեր ի:

- Չէ՛, չէ՛, - ասայ, - քյոր, ինչի՞ կըղոթոխես, վալա, ես խոտ կառնեմ, քյո քյեֆն ի:

Ճոչ քյորն պստիկ քյուրոչն ասայ. - Քյո՛ր, դաշ մե՞նքյ լոխկընանքյ, թե չէ՞ թաքավորի լաճ պիրենքյ տակ, լոխկընա:

Էլան ծառու վրավուց սնդուկն պիրեցին տակ, սնդկից խանիցին փյուս, վեր մեմեկելու շապ ուրախյան, առին վեր մեմեկելու սրտին, դոշին, ուրենց քյեֆ-ուրախութեն արիցին: Խաց-կերակուլ պատրաստեցին, մեյտեղ կերան, խմեն: Ասին. - Թաքավորու լա՛ճ, մենքյ գյեո կէրթանքյ խաս բախչի մեչ կֆռանքյ, փյու մե հա լոխկըցի, չյուր մենքյ կուգյանքյ:

Էլան էնոնքյ կնացին: Թաքավորու լաճն էլավ խալավ իխան, մտավ մեչ ճրին, լոխկըցավ, էլավ փյուս: Խալավ խագյավ, նստավ վեր մարմար քյարերայ: Որ նստավ դա, մե հա ախըմ քյաշեց: - Ա՜խ, - ասաց, - մե հատ էլ ես նախրուրթու ախչիկն տեսնի, մաշտենքյ սա՞ղ ի, մեռե՞ր ի, էս անաստվածներ զի մու պիրին, իսկեցին մեչ էսա կարիք երկրին:

Ըսկուն ասելուն պես՝ տղեն փոսից բոռաց, ասաց. - Հայրի՛կ, ես ըստեղն եմ, մեչ էսա փոսին, ես քյո լաճն եմ, նախրուրթու ախչկան տղեն իմ, ինկիր եմ էստեղ որ քյե տանեմ:

- Տղա՛, - ասաց, - ինչի՞ ես մտեր էտա ցախերայ տակ:

- Հայրիկ, էն անաստվածներայ հ'ախուն ի, մտիր եմ էսա տեղ:

Էնտեղեն մարթն խասավ որ տղեն պաքյեց, գյրկեց, ուրախցավ, իրիշկաց, որ աստված պախի, տղեն էլե բաքաիգյիթ մարթըմ, որ չվան չիգյա միճա՜ց պիլոր:

- Հե՜յ, - ասաց, - տղի՛կ, ես էկա ինգյա էսա անաստվածներայ ծեռ, փյու՞ ինչի էկար, հեյ վա՜խ, ես էլ, փյու էլ կուրիսանքյ կնացինքյ:

Ասաց. - Հայրիկ, մի վախենա, հ'ուս ունեմ աստծուց որ քյե ըստեղեն փըրթուցեմ, գյինա էրթանքյ քյո խոր հայրենիքյ: Դե, հայրիկ, ես կմտնեմ մեչ էսա փոսին, էսա կըռռ-կավալ կլցեմ էմ էլ վեր եմ գյլխին: Էնոնքյ եմ էլ տը գյան քյե տնեն մեչ սնդկին, տի մ'էլ տնեն վեր ծառին: Էնոնքյ որ շապկըներ խանին տրին ըսա տեղ, լոխկըցան, ես էնոնց

շապկըներ տը վառեմ, դորիսի էնոնք թասլիմ կըլնեն, տյու մառախ մ'անե:

Տղեն մտավ մեչ ուր տոսին, խերն էլ նստավ վեր մարմար քյարերայ: Փարիքյներ, էմ էլ վիրվանց կըժալեն իճան վեր մարմար քյարերայ, նստան թաքավուրու լաճու կշտին, էմ էլ քյեֆ-ուրախութեն արիցին էնտեղ: Էլան թաքավուրու լաճ էմ էլ տրին մեչ սնդկին, տրին վեր ծառին: Էնոնց խալըվներ խանիցին էմ էլ, պստիկ քյոր իրիշկայ դեխ էստ տոսի ցսխերն, ասայ. - Քյո՛ր, վոլա, էստ տեղ խողածին ի իկե, էստ ցախեր վո՞վ ի պիրե, կոլոնե էստ տեղրանքյ:

Էմ էլ ճոչ քյոր սախար տարավ. - Ումստախոր օռոսպի, էմ էլ տյու քյո սիրտ ավրիցի՞ր, կարելի յի թաքավորու լաճն ի խաղցի, կըռռ-կավալ ժողվե:

Պստիկ քյոր ծեն կտրեց:

Էլան ուրենց խալըվներ խանիցին տրիցին էտա մարմար քյարերայ պըռկի վերեն, մտան մեջ հ'ավուզին:

Էտա լաճն էր, կախտիկ էլավ էտոնց խալըվներ իպե մեչ էտա տոսին, վառեց:

Քյորերն էր, լոխկըցան էլան տյուս, շապիքյ, շապիքյ, շապիքյ չկա: Խալըվներ խազյան որ թոնեն, շապիքյ չկա որ թռնեն: Էստ տեղ շապիքյ, էնա տեղ շապիքյ, շապիքյ չկա:

Պստիկ քյորն ասայ. - Ի՞նչխ ի, որ ես կասի՝ էստ տեղրանքյ խողածին կա, ի՞նչխ ի:

Նսպւան էնտեղ էրկու քյորեր, լացին:

Ճոչ քյորն ասայ. - Հեյ, խողածին եքյ, ը՞նս եքյ, ջը՞նս եքյ, էլեքյ տյուս, ստվածութեն մե իտու ծե, մե իտու մե:

Լաճն ասայ. - Դե տյուքյ թաքավորու լաճու արևու վերեն երդվեքյ, թե տյուքյ զի ծեռ չեքյ իտա, ես էլնեմ տյուս:

Բախտ տվիցին ասին. - Քյե ծեռ չենքյ իտա:

Լաճն ասայ. - Դե էլեքյ թաքավուրու լաճն պիրեքյ տակ:

Էլան պիրիցին տակ: Լաճն էր, տոտից էլավ կայնավ էնտեղ խետ խոր կշտին: Էնտեղ ուրախցան վեր մեյմեկու. քյեֆ-ուրախութեն արին, նոր խայց ուտել, նոր լոխկընալ, նոր ֆռալ մեչ հ'իզյուն:

Թաքավուրու լաճն ասայ. - Դե՛ փարիքյ, էլեքյ էրթանք մեր երկիր: Տյուքյ զի պիրիքյ էստեղ մափս արիքյ, ումրս կնայ, լաճս էլե չանզյ զիկ:

Էլան ուրենց թադարյուքյ տեսան: Լաճ էրկու խապ անմահութնի խնծոր քյաղեց, շուշեմ'էլ էտա հ'ավուզի անմահութնի ճրից լցեց, տրեց ուր ծոց, կասպ արին ինոնց երկիր դողրու պռնիցին ճամրախն էկան:

Էլան դողրու էկան մո կոճ:

Ասայ. - Պարև քյե, կոճ:

Խերն ասայ. - Տո տղա՛, տյու ծուա՞ր:

Կոճն ասայ. - Վայ ասու պարին, խազար պարով, երիտասարթ ջհել, տյու պռծար ազատա՞ր:

Էնտեղ թողիցին ընցան: Տղեն խանեց ուր ծոցից էրկու խատ խնձոր, մեկ շուշա ճյուր, իտու կոճին:

- Հե՜յ, - ասաց, - ջհել, էտա շուշա ճյուր մե հա շուռ տուր վեր իմ գլխուն:

Շուռ տալուն պես, ասպծու խրամանքյով կոճ պատռավ, խորոտիկ մարթ մ'էլավ տյուս: Ասաց. - Էրթաս պարի, խազար պարով, ծեռ թալես քյար, քյար մեչ քյո ծեռաց կանաչի:

Էտա մարթ որ կեր. փարիքյ սեհրի են արե: Էտա մարթուն արիր են փետ, թալիր են ճամխի օրթալաղ:

Լաճն էր, քշեց էկավ խասավ խոր, մեյտեղ կնացին բազըրգյնի երկիր, կնացին բազըրգյնի տուն: Էն օր ինչ էնոնքյ էճան րազըրգյնի տուն. էն օր ճ՛իշթ բազըրգյան ուր պեռներով մեյ տրա էկավ էճավ ուր տուն:

Բազըրգյնի կնիկ վեր բազըրգյընին ուրախցավ: Թաքավուրու կնիկ վեր ուր իրկան ուրախցավ, ինոր լաճուն: Քյեֆ-ուրախութեն արին:

Բազըրգյան էր, խարցնեց. - Էսա վո՞վ ի:

Նախրորթու ախչիկ տեղբատեղ կպատմի, կուրախնան: Էնպեղ թե մեկ օր, էրկու օր կմնան, կէլնեն քոչ-բար արիցին, բազըրգյնի տնից էլան ինցյան ճամբախ, էկան դեխ թաքավուրու լաճու խոր երկիր:

Էլան կիշեր արիցին մեկ, ցերեկ արիցին մեկ, կիշեր-ցերեկ քշեցին էկան:

Տղեն ասաց. - Բաբո՛, ես նեղացա, էսօր թափենքյ էստեղ, մե հ'ատ ըռհաթենքյ, առավուն նոր էլնենքյ էրթանքյ, ախըր հ'էվարի:

Էնոնց պեռներ կթափեն, կիճնեն տակ, կըռհաթեն, խաց-պարին կուտեն, կէլներ խեր լաճ քյներ կտանի, կքյնեն: Խետ ջուխտ փարուն նախրուրթու ախչիկ մենակի կմնա ակախ:

Կես կիշեր էլե-չէլե, նախրուրթու ախչիկ տեսավ մարթըմ մեչ էրկինքյ, մեչ գյետինքյ գյետ կուգյա: Էնոր մեյ ոտ գյետ Խավի-ծոր*, մեկ գյետ Վան, էն կանդար որ հ'էրկեն ի: Խավիծուրու ոտն էր, իթալ Վանա ոտաց մոտ, արաց ջուխտ մու, թիքյ կայնավ: Էտա մարթ նազյաթան կըզվավ ինցյավ վեր էնոր տորին, էնոր գյլոխ խասավ Պերկրի**, ոտքեր մնաց Վան: Մռութ պարզեց, էրկու փարիքյ առեց վեր ուր էրկու թիֆքերաց, բիրդան էլավ կայնավ, առեց կնաց:

Նախրուրթու ախչիկ որ տեսավ փարիքյ տարան, շատ իլաց, առցունքյ կաթավ ուր լաճու աչքերաց: Լաճ բիրդան ակխավ, որ մեր կիլա:

- Մարե, ինչի՞ կիլաս:

Ասաց. - Մարեն քյե կուրբան, իս չի լամ ապա վո՞վ իլա. կտիսնաս փարիքյ էստեղ չեն, փարիքյ տարան:

Ասաց. - Մարե՛, վո՞վ տարավ:

---

* Հայոց Ձոր (Ծ.Բ.):

** Բերկրի (Ծ.Բ.):

Ասայ. - Գյեո ըսնա հ’էրկեն մարթըմ փարավ:

Էնտեղ խերն էլ ակխավ, իշկային որ փափիքյ փարած են, բոշ ի: Լային, մըռմըռային: Որ շատ լային մըռմըռային, մարթըմ ճոկ կայնավ ինոնց հ’առաճ: Իրիշկային դեխ էտա մարթ, մարթու բոյ մեկ գյազ ի, մուրուսն էրկու թիզ, պալթե մը գյեո դրեր ի վեր ուր թիվին:

Ասայ. - Հեյ, խողածի՛ն, ինչի՞ կիլեքյ:

Ասիյին. - Հալ-հեքյաթ ըսնա պան մ’էլավ, փարիքյ փարան, ըսնա հ’էրկեն մարթըմ փարավ:

Ասայ. - Մառախ մ’անեքյ, հան ես գյեո կէրթամ կպիրեմ:

Ասելուն պես՝ մարթն էն փեղեն կուրիսավ, էլ չտեսան էնոր: Կնա̈յ. չյուր էնոնքյ ուրենց աչք ւպային խըփին, ջւսն-պոլւսդ վա̈րիքյ առից իպե:

Ասայ. - Աղա՛, ծեր ուզած էսա չի՞:

Ասայ. - Էսա հւսման մեր ուզածն ի, շատ շնորհակալ ենքյ:

Ասայ. - Աղա՛, փյու զի չե՞քչ պըռնե մո ծե խուտաղ:

Ասայ. - Տյու քյե մեղքյ արիր, փյու մեր աղեն ես:

Ասայ. - Չէ, ես ծեր խուտաղ, փյուքյ եմ աղեքյ:

Ջան-Պոլադն ասւսյ. - Չէ, էլեքյ քշեքյ էրթանքյ, զի ջւսնըմ կա՝ ծեր ուղուրին ի:

Քշիյին, շատ-քիչ ասփված կիտի, էմէլ նեղեցւսն, թա̈փան: Ջան-Պոլադն էմէլ էնոնց մւսլերւսց, կընթերաց մոյյաթ կկենա:

Ջան-Պոլադն էր, էնոնց իպե, թաքավորու քյաղաքյ էխան փյուս:

Ասայ. - Աղեքյ, ծեզնե ռըջե մը կանեմ, փյուքյ չէրթեք մեչ թաքավուրու սարին:

Էլան, ճեռկեն ուրենց փուն պռնիյին, նստան ինե:

Ջուսբ փվիյին թաքավորին, թե. - Թաքավո՛ր, քյո փղեն էլ, քյո խարսն էլ, թոռն էլ էկած են:

Թաքավորն ասայ. - Կնայեքյ, թե որ եմ լաճն իկեր ի, ասեքյ թո մե խա գյա եմ մոտ՝ փիսնամ:

Էլան, առատմախտառ էկան թաքավուրու լաճու իտև: Էկան փյոտ թըփիյին, բոռային. - Թաքավորի լա̈ճ, արե՛, քյո խեր քյե կկանչի:

. Ջան-Պոլադն էր, շոտըմ փյոտ էա̈յ, ասայ. - Հե՜յ, փյուքյ վո՞վ եքյ, ըտըսնա̈ առանց հրամանի փյոտ կթըփեքյ, կբոռեքյ, մայա̈ր ըստեղ բա̈ռա̈դա̈ տե՞ղ ի: Կնայեքյ եփ, ա̈լա̈ թաքավուրու լաճ չէլե վեր:

- Ջանը՛մ, - ասայ, - կնա̈ խան վեր, թաքավոր կկանչի:

Ասայ. - Կուրիսե՛քյ:

Մարթեր սըռթոխան, խա̈բա̈ր մ’ինորից, խա̈բա̈ր մ’ինորից, էլա̈վ կռիվ: Մեյ մեկին մեկ պալթա զա̈րկեց ասայ. - Ծեր խեր անիծեմ խե ծեր թաքավուրուն, ջա̈հնվեքյ կնայեքյ:

Կնա̈յին թաքավուրուն ասին. - Ջանը՛մ, ըսնա̈ անասփված մարթըմ կա վեր էնոր փռան, չթողնե որ մարթ մտնի ներս, ինոր բա̈ժն գա̈զ մ’ի, մուրուս չորս թիզ ի:

Էլա̈ն ասին. - Կնա̈յեքյ փեռլիթքով արեքյ:

Էլան էկան, կըծկըվան, ալփանջա էլան, էլ փյուռ չը թփին չյում Ջան-Պոլադն էկավ, փյուռն իպպպ:

- Պարև քյե, աղա՛:

Ջան-Պոլադն ասայ. - Աստծու պարին, հան գյեռ ըսրսնա մարթավարի կայնեքյ, սարի հայվանի պես կուզյեքյ կալաբալըղ կանեքյ՝ ի՞նչ: Դե՛, նստեքյ, - ասայ, - չյում եմ աղեն գյա:

Նստան, շատ նստան, քիչ նստան, աղեն աստված կիտի եփ կէլնի վեր: Էսոնքյ աջըղան նստալով, էմ էլ ասին. - Ջանըմ, էլի կնա ծեն տու, թո գյա:

Ասայ. - Ջանըմ, էմ'էլ ինչի՞ ֆիլֆիլ մտավ ծեր ոռ, աչկեքյ չյուր էլնի վեր:

Չէլավ, էմ էլ արրն կալաբալըղ էմ'էլ Ջան-Պոլադ առեց պալթեն, մեյ մեկ մեկ պալթա իտու մեչ գյլխնեկայ, ասայ. - Կնացեքյ ծեր թաքավորուն պարև արեքյ:

Էլան մարթեր էմ'էլ փեռր-փեռշման կնացին մը թաքավոր: Էմ էլ ասացին. - Աստված քյո տուն ավիրի խե քյո լաճուն, անաստված մարթըմ մե չի թողնե, որ էրթա հ'առճն քյո լաճուն գրուցե:

- Հե՜յ, - ասայ, - էսօր սոն ի՞նչ տ'էլնի:

Էլավ մաջլիս կէօլոնեց, ասայ. - Կնիկ մ'էօրեոխկենքյ, էրթա:

Էլան որոշեցին մեյ խպտ խեղճ պառավ էօրոխկեցին, կնաց վեր կուան: Կնիկ կնաց վեր տռան, ուշիկըմ տուռ թըփեց:

Ջան-Պոլադն էկավ փյուռն իպպպ: - Մորքյու՛ր, - ասայ, - ի՞նչ կասես:

Ասայ. - Մորքյուր քյե մեռնի, ախըր կիտես թաքավոր շատ խիվանդ ի, կուզի մե հա ինոր լաճ գյա տիսնա:

Ասայ. - Արե՛ ներս, չյուր կակխի՝ մեյ տեղ կնացեք:

Պառավն էր, ժամանակըմ էնտեղ նստավ, մե հատ իրիշկայ դեխ փարիքյ, բայլըմիշ էլավ էնոնց խորոտկութնե:

Պառավն ասայ. - Ես կէրթամ, մայան թաքավորու լաճ թո գյա:

.Պառավ էլավ կնայ դողրի մը թաքավոր: Թաքավորու աչք որ ինզյավ պառվուն, ասայ. - Պառա՛վ, հ'ու՞ր է իմ լաճ:

Ասայ. - Քյո լաճ գյեռ կուզյա, - ասայ, - թաքավոր, աստված քյո տուն ավիրի խե քյո խարսներայ, յարաբի մեչ աշխըրքյին էլ խորոտ կա՞ն, թե չէ, քյո ջուխտ խարսներ մենակ են:

Ասայ. - Տո պառավ, փյու մայան տեսա՞ր եմ խարսներ:

Ասայ. - Խա, վալա տեսա, համա բայլըմիշ էլա:

Թաքավորն էլավ ուր վազիր մենակ, գյախտիկ կանչեց: Ասայ. - Վազիր, եմ խարսներ շատ կգյեռվան:

Վազիրն ասայ. - Թաքավո՛ր, չըլնի քյո միտք առե՞ր ի վեր քյո խարսներայ:

- Խա՛, վըլա՛, - ասայ, - չըմ տիսե եւ, ամա մովըլըղի ասածով:

Ասայ. - Թաքավո՛ր, քյանի էն Ջան-Պոլադ քյու լաճու տռան վերեն ի, փյու էն խարսներ չես կանա պիրե:

Ասայ. - Ապա ի՞նչխ անենքյ:

Ասայ. - Սկա քյո լաճ որ կգյա, փյու մե հա քյո լաճու մուրեն խարյընի, ասա. «Բալա՛մ, էսա մարթ որ քյո փռան ի, քյո մշակուն խեր-մերըմ, փուն-փեղըմ կա՞, թե չէ»: Որ կասի՝ չեմ կիպե, յան կա, չկա, ասա. «Էսա քյանի՞ փարի յի մո քյե մշակ ի»: Էն որ կասի փարի մ'երկու, թե մեկ, ասա՛. «Է՜, իսկի իգին փվի՞ր ես՝ էրթա ուր փուն, ուր օլուղ-չոջուղ մե հա փիսնա»: Թե որ ասայ չէ, փյու ասա. «Բալա՛մ, փյու մեղք մ'ես արե, պեփք ի փյու իգին փաս, որ էն էրթա մե հա ուր օլուղ-չոջուղ փիսնա ու էմ էլ փառնա, եփ գյա»:

Էնոնքյ էսա որոշում փվին մեչ ուրենց. թաքավոր-վազիր: Թաքավուրու լաճն էր, էլավ որ պիփի գյեր մո թաքավոր, Ջան-Պոլադն ասայ. - Աղա՛, ես էլ գյամ մե հա թաքավուրու քյոշկ-սարեն փիսնամ, մե հա փիսնամ հեմ քյո խեր ջահել ի՞, խալիվոր ի՞:

Ասայ. - Չէ, բալամ, ես մենակ կէրթամ:

Ջան-Պոլադն մռթավ, նսփավ դա, իլայ:

Թաքավուրու լաճ էկավ մոփ ուր խեր, պարև փվին, պարև առին. կնայ նսփավ: Խոշ-բեշ էլան, գյեռ մեղավոր սըռփով ուրախցավ, առեց ուր գյլխու գյացած հմեն մեկ-մեկ պատմեց խոր:

Թաքավորն ասայ. - Հե՜յ բալա՛մ, էսա մշակ փյու ո՞ր փեղեն ես կընդե, ըննա աղեկ մշակ, որ քյո փան համ շունն ի, համ բայչին ի, համ նորադար:

- Թաքավոր ապրած կենա՛, են գյեռ կըսմաթ էր, ասփվածութեն ճամխեց, էն մշակ որ չըլներ, անկարելի էր, մենքյ չկանենքյ գյե եմ խոր երկիր, խասնե եմ մրազին:

Ասայ. - Բալա՛մ, որ քյե ըփըսնա աղեկութեն ի արե, փյու իսկի իգին փվի՞ր ես, որ էն էրթա ուր փուն-փեղ, օլուղ-չոջուղ փիսնա:

Ասայ. - Չէ՛, իգին չեմ փվեր ի:

Ասայ. - Պեփք ի, որ էնոր մե հափ իգին փաս, թե որ էնոր կնիկ կա, փղա կա, մե հափ փիսնա, էնոր պիրփն էլ վեր քյե ուրախնա, սիրփ խորոփ կփայնա:

Խորոփ, ութաթլի լաճուն կանդըրմիշ արայ:

Լաճն ասայ. - Այո՛, ես փ'էրթամ, իգին փամ:

Էնոնքյ դա ասին, Ջան-Պոլադ ուր փեղ խասկըցավ, ինգյավ վեր քիթ-մըռթին, մփածեց:

Թաքավուրու լաճ էլավ կնայ փուն: Կնայ, էրթալուն պես Ջան-Պոլադ էլավ, հ'առճըվներ կայնավ: Ասայ. - ասպա՛ծ սիրես, աղա՛, քյո խեր քյե ի՞նչ ասայ, փյու գի փը պատմես:

- Տո բալա՛մ, - ասայ, - քյո պեփքն ի՞նչ ի:

Ասայ. - Չէ, աղա՛, ես խասկըցիր եմ ինչ ասե, կուզես ասա, կուզես մ'ասե: Թաքավոր եմ իփև կան կգյա, չուզե ես էսփեղ կուշփ փորով խաց մ'ուփեմ, ես փ'էրթամ:

Իլայ, մըռմըռայ, աղից կայ պարով արայ, ծեռքյեր պաքյեց, կնայ մո փարիքյ, ծեռքյեր պաքյեց. ճոչ խաթունին էմ'էլ ըսկուն:

Փարիքթերայ լայն էլ էկավ, ասին. - Ջան-Պոլադ, ինչի՞ կէրթաս:

Ասաց. - Չէ, տ՚էրթամ, թաքավուրու ամրն ի:
Ջան-Պոլադ փարում ասաց. - Առա՛ եմ մուրուսից թելըմ, տի մեչ քյո կուլթուն, նեղ տեղ կինեքյ էմէլ ես ծե կխասնեմ, ես ծե չեմ մոռնա: Նեղ տեղ կինեքյ մազ տվեքյ կրակ, ես ծե կխասնեմ:
Մազ տալուն պես, նազյաթան մեչ ի՚էօղին կուրիսավ:
Թաքավորու լաճ, փարիքյ շիվ գյրին տրին ինե, ընկուն ինչ թաժա մեռելըմ տնից նոր խանին տյուս:
Թաքավոր մարթ ճամխեց, ասաց. - Հեմ եմ լաճ էնոր մշակուն իզին տվե՞ կնայե:
Էկան թաքավուրու լաճուն ասին, լաճն ասաց. - Խա՛, էօրեոխկեր եմ, կնայեր ի:
Թաքավոր ուր մաջլիսին ասաց. - Ջանըմ, ես ի՞նչխ անեմ եմ լաճու խետ, որ փարիքյ պիրեմ զիկ:
Ասաց. - Ի՞նչ պիտի անես, թաքավո՛ր, քյո լաճ կանչի տավ՚աթ, կառնեեքյ կէրթանքյ իսա տաշտի մեչ սեյրան անել, էնտեղ խորըմ կա, կտանեեքյ վեր խորի պենին, կմըլըշկեքյ ինե, վո՞վ պիտի կիտնա: Էն կախ պյու կնա էնոր փարիքյ պե քյե խամար:
Էլան, լաճուն մարթ էօրեոխկեցին իտև, առեց էկավ: Էնտեղ նստան կերան, խման, ուրախութեն արին, լաճու սիրտ էփեյի պացվավ:
Էլավ թաքավորն ասաց. - Բալա՛մ, դե էլեքյ էրթանքյ էսա տաշտեր ֆռալու:
Թաքավորու ամրն ի, ասաց՝ էլլենքյ, էլլենքյ:
Էլան կնացին տաշտ, քյեֆ-ուրախութեն արին: Թաքավորն ասաց. - Ծիւնթերաց վերեն աչիղանքյ, մե իա էճնեեքյ տակ, պայա քյելենքյ:
Էլան քյելելով ուշիկ-ուշիկ կնացին, խասան խորի պերան: Ծարավցան, թաքավորն տղին ասաց. - Բալա՛մ, մե իա մտի խոր, ճյուրըմ քյաշի խմենքյ:
Մտուցին, ճյուր իխան, խման պըռծան, ասաց. - Դե էսա մեկ փարխաջա էլ լից, քյաշենքյ նոր քյե խանենքյ տյուս:
Փարխաջ քյաշիլեն պես՝ աւլ տրին վեր պենին, թաքավուրու լաճ մնաց մեչ խորին, էնոնքյ էկան տուն:
Թաքավորն ասաց. - Դե իայդե, կնացեքյ եմ խարսներ առեքյ պիրեքյ:
Էլան չորս-խինգյ կնիկ, չորս-խինգյ մարթ դոլրու էկան վեր թաքավուրու լաճու տռան: Տյուռ թըփեցին, էկան տյուռ պացին:
Թաքավուրու թոռն էլավ տյուս, ասաց. - Ի՞նչ կասեքյ:
Ասին. - Թաքավոր ծե կանչի:
- Կնացեքյ, - ասաց, - ալ՛ա մենքյ միր պատրաստութեն տիսնանքյ, մեր խերն էլ գյա, նոր խըռտ իրաց կուգյանք:
Էլան մարթեր տառցան եա էկան:
Կնացին թաքավուրուն ասին. - Մարթ մ՚էլ կա էնտեղ:
Ասաց. - Հա՛ն, էն իմ թոռն ի: Էնոր կոտն էլ պիտի ուտեքյ, որ էնոնքյ գյան, թե չէ՛ անկարելի յի:

Էլան, աքյար առին, կնային որ թուռան սպանեն, խարսներ առնեն պիրեն:

Աքյար կնայ թաքավուրու թուռոչ փան չորս պիլոր պաշարիյին: Փարին էլավ փենջարիյ իրիշկայ, խասկըցավ, որ թաքավուրու նիյաթ ավիրիր ի վեր ուրենց, էլավ կնայ թաքավուրու խարսին ասայ. - Թաքավուրու աքյար մեր սարի աթրաֆ պաշարած են:

Ասայ. - Պաշարին, պաշարին, ինչ կանենքյ անենքյ: Մեր փերն մնայ ասփված, մե փը փանեն, մեր լաճն էլ փը սպանեն:

Փարին մեզեյ, բիրդան Ջան-Պոլադի մազն ինգյավ միփ: Էն արայ որ մազ փվեյ կրակ, էնոնքյ հաղ արիյին, փյուռ կոփրիյին, մփան ներս:

Փարիքյ ասին. - Յա՜, յա՜, թաքավուրու նիզամ-կանոն մանգյար ըսկընա՞ յի: Անենքյ թաքավուրու խարսներն ենքյ, մեյ փոր մոլյաթ փվեքյ, ախըր մենքյ փ'էլնենքյ էրթենքյ մո թաքավոր, նսփեք կահֆե մը խմեքյ:

Աքյրի ճոչն ասայ. - Դե՛ կայնեքյ:

Փարիքյ կնային որ կահֆա շինեն, կահֆի մահանով շոփըմ մազ փվին կրակ:

Մազ փալուն կրակ՝ Ջան-Պոլադն էլավ փյուս: Ասայ. - Խանըմներ, ի՞նչ էլե ծե:

Ասայ. - Ի՞նչ փ'էլնի, էկած են, մե կփանեն:

Ասայ. - Իմ աղեն հ'ու՞ր է, չէրնա:

Կասի. - Էն օրվե ինչ փյու կնայիր ես, քյո աղեն փարած, կուրիսուցած են:

Ջան-Պոլադն էլավ էնոր պալթեն իդիր վեր թիվին, էճավ փակ: Էճնելուն պես՝ բոռայ վեր աքյըրին. - Տյու ինչի՞ եքյ իկե:

Ասայ. - Թաքավոր հրաման ի արե, որ մենքյ գյենքյ էնոր խարսներ առնենքյ փանենքյ էնոր կոնախ:

Պալթե մ'իզարկ մեչ էնոնց մեծավորի գյըլխուն, ասայ. - Կնա՛ քյո թաքավուրուն պարև արա, իմ աղեն թո գյա:

Որ մեծավորն իսկեյ, էմեկէլ աքյար եփ փառյավ:

Էնոնքյ որ եփ փառյան, Ջան-Պոլադ կնայ թեխ խորի պերան: Խորի պերան իպայ, ասայ. - Աղա՛:

Թաքավուրու լաճն իրիշկայ, որ Ջան-Պոլադն ի, ասայ. - Ջա՜ն:

Ասայ. - Ծեռ փու զի, քյաշեմ փյուս:

Հ'էրկենցավ, ծեռ պըռնեյ, աղին քյաշեյ փյուս խորից:

Էկան փուն, ուրախցան վեր մեմեկելի,.ասայ. - Աղա՛, ի՞նչխ կուզես խանեմ էսա քյաղքյի գյլոխ, քյո ամրն ի՞նչ ի:

Ասայ. - Ջան-Պոլա՛դ, քյեզնից կուզեմ եմ խոր գյլոխն ու ուր մաջլիսի բիթյուն մարթերայ, քյեզնից էլ թյու պան չեմ ուզե:

Ջան-Պոլադն էր, էլավ պալթեն իփիր վեր թիվին, կնայ էլավ թաքավորի սարեն, մեչ հ'էօդին նսփավ: Կայլոն պռնեյ ծեռ, ասայ. - Թաքավո՛ր, մե հա կրակըմ պե, փիր վեր եմ կայլոնի՝ ես քյաշեմ:

Թաքավորն ասայ. - Էսա մարթն կուրուսցուցեքյ, մեկն սեյիս էլնի գյա զի ասի. «Կրակըմ փուր, իմ կայլոն կպուցե՞մ»:

Էն կախ ինչ թաքավոր սըրթոխավ, Ջան-Պոլադ ուր պալթեն իփիր վեր թիվին, էլավ թեխ թաքավոր: Թաքավորն իփուր պատ, կազուխըմ, ցիցըմ իզար մեչ պենին պուճուճակից իփուր փյուս, կնայ մեչ պատին, ասայ. - Տյու կայնի էսա փեղ:

Նազիր-վազիրներայ վզներ կփրեց, փենջարից թըփեց փակ, էլավ կնայ թեխ ուր աղեն: Էլավ կնայ ուր աղեն, փարիքյ քյեոֆով, ջըմբազով, նաղարով-զուռնով էկան մեչ թաքավուրու սարեն:

Թաքավուրու լաճ կնայ ներս, բիրդան աչք ինգյավ թեխ ուր խեր, որ պատի իրեսնվեր կայներ ի: Ասայ. - Ջան-Պոլադ, փյու եմ խեր չե՞ս սպաներ ի:

Ասւսյ. - Քյո խերն արիր եմ իմ ճրախկալ, կայնըցուցիր եմ պատի փակ, որ փյու ճրագյ փնես վեր ուր գյլխուն:

Էնփեղ նոր կպռնի խոր վիզ կըկփրի, ջանդակ կթալի փակ, գյլոխ կմնա վեր պատին, Ջոն-Պոլատի հիշատակն ի:

Թաքավուրու լաճ կպռնի պսփիկ փարին կփսակի ուր լաճուն, ճոչն էլ կփսակի վեր ուր:

Քյառսուն օր էննից խարսնիս կանեն, էննքյ կխասնեն ուրենց մըրազին, փյուքյ էլ ծեր մըրազին:

Իրկնուց իրեքյ խնձոր ինգյավ, մեկն ասողին, մեկն լսողին, մեկն էլ ջաղւսմաթին:

Էն կախ որ թաքավորի լաճ կխասնի ուր մըրազին, Ջան-Պոլադ կասի. - Դե՛ մնայեքյ պարի, ես դորիս փ'էրթամ վեր եմ փուն-փեղայ:

Կասի. - Չէ՛, իլլահ, փյու փը մնաս եմ մոփ, եմ առաճի վազիր փյու փ'ըլնես:

- Թւսքավոր, - կասի, - իմ աղեկութեն քյու լաճու արած աղեկութնի չարեքյի չարեքյն չի, որ էն արած ի զի խամար, - կասի, - էսա փարիքյ չեն, ջուխփ մ'էլ ըսկուն փարի զի ռասփ էկան: Քյառսուն փարի էննքյ ինգյան եմ իփև, ես էննց ծեռայ խեփ չը կնայի: Ես էլ սեհրիբազի ի: Ավուր մեկ եննքյ եմ՝ սեհրին ախթիցին, զի փրին մեչ սնդկի մը քյե պես: Էննց չարեն կըփրավ վեր զի, ֆայդա̈ չարայ, պըռնեցին զի արին կոճ, պիրին թալին իրեքյ ճամխի օրթալաղ: Թաքավոր, որ քյո լաճ զի ռասփ չի գյեր, ես հ'ավիդյանս-հ'ավիդյան պիփի մնե մու կոճ: Քյու լաճուն ես եմ ճար-ճա̈մբախ շանց փվե, հ'իվի մ'արեցի էնոր մոփեն, նամարդութեն չարւսյ, շուշե մը անմախութնի ճյուր, մեկ անմախութնի խնձոր իպե էն բա̈խչից, որ փյուքյ էկաքյ: Էն փեղ, որ էն շուշեն ճյուր իլից վեր զի, խնձորն իփուր ես կերա, էլա եմ էլ առաճվա սեհրիբազ Ջան-Պոլադ: Էնփեղ որ ֆիլան փա̈շպի մեչ ծեր փա̈րիքյ փարան, էն իմ ախպերն էր, որ ծեր փա̈րիքյ փարավ կնա̈յ: Ես քյո լաճու աղեկութեն եմ էլ չմոռյա: Կնայի, իմ ախպոր մոփեն փարիքյ խլիցի, առիցի պիրիցի: Քյո լաճու աղեկութեն իմ գյլոխ ընցեր ի, դե փյուքյ մնայեքյ պարի, ես գյեռ կէրթամ:

Ասայ էմ'էլ մեչ հ'էօդին կուրիսավ: